«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Հ եքիաթների դերը տարրական դպրոցում
ԱՌԱՐԿԱ	Մայրենի
ՀԵՂԻՆԱԿ	Գայանե ադամյան
ՄԱՐԶ	Արագածոտն
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Կարբիի Վ. Թեքեյանի անվան միջնակարգ դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....5

ԳԼՈՒԽ 1

ՀԵՔԻԱԹԸ՝ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԽՈՍՔԻ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ 7

ԳԼՈՒԽ 2

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑ.....14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....17

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հեքիաթը բարոյական ու մտավոր զարգացման համար շատ և շատ նման է մայրական կաթին...Այդ կաթն ինչպես սննդարար է եղել մեզանից քառասուն դար առաջ, նույնքան սննդարար կլինի և քառասուն դար մեզանից հետո:

Ղազարոս Աղայան

Այսօր անկախ Հայաստանում ազգային բովանդակությամբ կրթություն է իրականացվում, և դպրոցն է որոշում կրթության ազգային բովանդակությունը:Դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների մեջ մայրենի լեզուն յուրահատուկ դեր ունի: Մայրենի լեզուն կրթության լեզուն է:

Մայրենի լեզվի իմացությունը բազմաբնույթ գիտելիքներ ձեռք բերելու, մշակութային

արժեքներին հաղորդակից դառնալու, սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու բացառիկ միջոց է:

Թեև ուսուցմամբ կարելի է դաստիարակչական որոշակի խնդիրներ լուծել, սակայն մատաղ սերնդին հանրության համար կարևոր նշանակություն ունեցող արժեքների պատվաստումն իրականացվում է հիմնականում այլ գործոնների շնորհիվ: Դա ժողովրդավարական համակարգի տարրերի առկայությունն է հասարակական կառուցվածքներում, ուսումնական գործընացի ընդհանուր կուլտուրան է, կրթական համակարգում հաստատված բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը, սովորողների և ուսուցիչների հարաբերությունների ժողովրդավարական ոճը, ի վերջո՝ օրենքի գերակայության հաստատումն ու նրա հարգումը կրթության բոլոր սուբյեկտների կողմից: Կարճ ասած, դաստիարակության մեջ որոշիչը միջավայրն է. եթե հասարակությունն ինքը չի ապրում ժողովրդավարական արժեքներով, դրանք չի կարող մատուցել և ստիպել նրանցով ապրել իր սերունդներին: Մարդն ընդօրինակում և վարքի նորմա է դարձնում այն ամենը, ինչ տեսնում է, ինչի ներգործությունն իր վրա զգում է, ինչը կարևորում է իր սոցիալական առաջընթացի ու բարոյական հասունացման համար: Ուրեմն դաստիարակության ու սոցիալականացման խնդիրներում խոսքն ու խրատը, քարոզը, արհեստականորեն ստեղծված կարգ ու կանոնը որոշիչ չեն, **որոշիչ են կրթության սուբյեկտների միջև հարաբերությունների ընդհանուր կուլտուրան, աշխատանքային և ուսումնական նորմալ պայմանները, ուսումնական պրոցեսում սովորողների ազատության և ինքնուրույնության աստիճանը, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտը:**

Մեր կրթական համակարգում տարրական կրթությունը առավել պատշաճ ուշադրության է արժանի: Տարրական դպրոցում են հիմնականում դրվում սովորողների ինտելեկտուալ, բարոյական և հոգևոր որակների ձևավորման ու զարգացման հիմքերը: Եվրոպական որոշ երկրների կրթական հայեցակարգերում նշված է, որ սովորողների ողջ ուսումնական գործունեության հաջողության գրավականը նախադպրոցական և տարրական կրթությունն է: Օրինակ, Ֆինլանդիայում կրթության համար հատկացված ֆինանսների հիմնական մասը ծախսվում է նախադպրոցական և տարրական աստիճանի կարիքների համար: Կրթության այս աստիճանի համար պահանջվում են բարձրագույն համալսարանական կրթության ամենաբարձր որակի մանկավարժներ:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել հեքիաթների դերը տարրական դպրոցում և

ազդեցությունը սովորողների դաստիարակության վրա:

Հետազոտության խնդիրներն են՝

- Ուսումնասիրել թեմայի հետ առնչվող գիտաուսումնական գրականությունը,
- անդրադառնալ մի շարք հեքիաթներին և դրանց ազդեցությանը,
- բացահայտել սովորողների վերաբերմունքը հեքիաթների նկատմամբ,
- ուսուցումը կազմակերպել Հովհաննես Թումանյանի հեքիաթների միջոցով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Հոգեբանական և մանկավարժական աշխատություններում շարադրված բարոյական դաստիարակության հարցերի ուսումնասիրությունը և վերլուծությունը թույլ են տալիս տարրական դպրոցի տարիները համարել սովորողի բարոյական ձևավորման լավագույն շրջան: Տարրական դպրոցում դաստիարակության միջոցով զարգացվում են սովորողի բարոյական զգացմունքները՝ ազնվությունը, ճշտախոսությունը, համեստությունը, լավատեսությունը, բարությունը: Հեքիաթների ուսումնասիրությունը տարրական դպրոցում հնարավորություն է ընձեռում տարիքային տվյալ փուլում սովորողին հաղորդել ինֆորմացիայի ընկալման մեծ լիցք, որը ոչ միայն զարգացնում է նրա մտահորիզոնը, այլև հարստացնում է հիշողությունը, սնունդ է տալիս հետաքրքրությանը, ինչպես նաև ձևավորում է տարբեր բարոյական զգացմունքներ: Ուսուցչի խնդիրը պետք է լինի դրական արարքների կատարումը դարձնել դպրոցականի համար մշտական սովորույթ: Եվ տեղին է հիշել Հեգելի խոսքերը, երբ ասում էր, որ մարդը երբ կատարում է այս կամ այն բարոյական արարքը, դրանով դեռևս առաքինի չէ: Նա առաքինի է այն դեպքում, երբ վարքագծի այդ եղանակը դառնում է նրա բնավորության մշտական գիծը: Հմուտ ուսուցիչը պետք է բարոյական դաստիարակության ուղիները որոնի, աշակերտների մեջ ձևավորի բարոյական հասկացությունները ճիշտ ըմբռնելու կարողություններ:

Առաջատար մասնագետների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ

կարևոր են հեքիաթների ուսուցման միջոցով զրույցների ու քննարկումների, նախապես մշակված հարցադրումների, բազմաբնույթ մեթոդների, խաղային իրավիճակների միջոցով քննարկել որևէ անձի վարքագիծը, բնավորության գծերը, արարքները, և կարևոր խնդիր է դառնում աշակերտի դրական բարոյական օրինակի ձևավորումը, բացասական արարքներից աշակերտներին ետ պահելը, իսկ դրան պետք է հասնել ճիշտ կողմնորոշման, մանկավարժական տակտի, վարպետության և հեղինակության շնորհիվ…

Մարդու կյանքում տարրական դպրոցն այն շրջանն է, երբ դրվում են բարոյական զգացմունքների, գնահատումների նախնական հիմքերը: Երեխան սկսում է գնահատել ինչպես իր, այնպես էլ իր շրջապատի լավ ու վատ արարքները…

Մենք գտնում ենք, որ հեքիաթներում գեղարվեստական կերպարի ուժով ներգործելով զգացմունքների և բանականության վրա, հնարավորություն ենք ընձեռում սովորողի մեջ դաստիարակելու բարություն, հոգևոր զգայունություն, հարգանք, սեր, լավատեսություն…

ԳԼՈՒԽ 1

ՀԵՔԻԱԹԸ՝ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԽՈՍՔԻ ԵՎ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Համաձայն մեր այն վարկածի, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխայի համար կարդացած հեքիաթներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում նրանց խոսքի և երևակայության, ինչպես նաև նրանց անձի արժեհամակարգի զարգացման վրա, մենք կատարել ենք հետազոտական աշխատանք, որին մասնակցել են 7–10 տարեկան 25 կրտսեր դպրոցականներ, որոնցից 14–ը՝ աղջիկ, 11–ը՝ տղա: Հետազոտությունները կազմակերպել ենք Կարբիի Վահան Թեքեյանի անվան միջնակարգ դպրոցում, որտեղ աշխատում ենք որպես դասվար: Հետազոտական աշխատանքները կատարվել են 2 փուլով.

- նախ մենք երեխաներին առաջարկեցինք հորինել պատմություն որևէ կենդանի էակի մասին՝ մարդ, կենդանի կամ ինչ–որ բանի մասին, որը երեխան կցանկանա:
- Երկրորդ փուլում երեխային առաջարկվում է մտածել և նկարել որևէ պատմություն, հեքիաթ՝ դրա համար նրանց տալով 5 րոպե:

Երկու մեթոդի դեպքում էլ աշխատանքը գնահատվեց 10 բալանոց համակարգով. 10–9 բալը՝ գերազանց, 8–7 բալը՝ միջին, 6–4 բալը՝ բավարար, 0–3 բալը՝ ցածր: Խոսքի հետազոտման նպատակով դասարանին առաջարկեցինք 5 բառախումբ, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է 8–10 բառ: Սովորողները պետք է հորինեին հեքիաթ՝ գործածելով այդ բառերը: Այս աշխատանքը ևս գնահատվեց 10–բալանոց համակարգով: Մեր ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփելուց հետո եկանք այն եզրակացության, որ երևակայության և խոսքի զարգացումն իրապես կապված են հեքիաթների հետ, որովհետև նրանք, որոնց մոտ նկատվեցին բարձր ցուցանիշներ, լսել էին շատ հեքիաթներ իրենց ծնողներից և իրենք նույնպես կարդում էին: Նկատվեց հետաքրքիր մի հանգամանք. այն երեխաները, ովքեր լսել էին հեքիաթներ, բայց իրենք չէին կարդացել կամ պատմել, դրսևորում էին շատ վառ երևակայություն, հետաքրքիր դրվագներ էին հիշում, սակայն խոսքերով դրանք նկարագրելու ժամանակ դժվարություններ էին ունենում, ինչպես նաև խոսքի հետազոտման ժամանակ դժվարությամբ էին ներկայացնում խոսքի մեկնաբանումները, այսինքն՝ անհրաժեշտ է, որ բացի լսելուց երեխաները նաև իրենք պատմեն հեքիաթները, որպեսզի բանավոր խոսքի արտաբերումը դյուրին լինի, և նրանք կարողանան ճիշտ կառուցել իրենց խոսքը: Միաժամանակ պարզվեց, որ ոմանց մոտ էլ երևակայությունն այդքան էլ վառ չէր, սակայն զարգացած էր խոսքը, ինչը խոսում է այն մասին, որ վերջիններս կարդացել կամ լսել

են այնպիսի պատմություններ, որոնք նպաստել են գեղեցիկ խոսքի ձևավորմանը, սակայն չեն նպաստել երևակայության զարգացմանը: Կային նաև երեխաներ, որոնց խոսքը և երևակայությունը հավասարապես զարգացած էին: Մասնավորեցնենք դրանցից մի քանիսը. Աղջիկներից մեկն ունի բավականին զարգացած երևակայություն՝ վառ, հստակ կողմերով արտահայտված մտածողություն. նա իր պատմությունը վերարտադրելիս բոլոր կերպարներին առանձնացրեց. (նրանք իրականում չէին կարող խոսել, ծիծաղել, շարժվել): Այս երեխան, առանց 1 րոպե կանգ առնելու, սկսեց իր պատմությունը, ձևակերպեց վերնագիրը, իսկ բառերը մեկնաբանելիս 1 բառի համար բերում էր 2–3 մեկնաբանություններ և օրինակ. սա խոսում է նրա զարգացած լինելու մասին: Մեկ այլ դեպք: Աշակերտներից մեկի ում երևակայությունը ևս զարգացած է, առանց մտորելու՝ սկսեց իր պատմությունը, որի կերպարները ևս վառ էին և հետաքրքիր: Այնպիսի նկարագրություններ էր տալիս, որ իր տարիքի երեխայի համար դրանք զարմանալի էին հնչում: Ծնողի հետ զրուցելուց հետո պարզ դարձավ, որ մայրը նրան հեքիաթներ է պատմել վաղ տարիքում, ինչը ևս իր ազդեցությունն է թողնում երեխայի հետագա զարգացման վրա: Հաջորդ օրինակը՝ տղաներից մեկը պատմությունը սկսելուց առաջ բարձրացավ աթոռի վրա և ձեռքերը պարզելով՝ սկսեց իր պատմությունը: Ճիշտ է, նրա հերոսը վերցված էր մուլտֆիլմից, բայց բովանդակությունը վառ էր և անընդհատ զարգացող ու, նույնիսկ խրատներ էր պարունակում իր մեջ, խոսքը ևս զարգացած էր, նրա մայրը նույնպես, սկսած վաղ տարիքից, պատմել էր նրան հեքիաթներ: Այսպիսով, հետազոտությունները ցույց տվեցին, որ հեքիաթներն իրապես իրենց ազդեցությունն են ունենում երեխաների անձի զարգացման և կայացման համար: Աշակերտների խոսքի զարգացման, ազատ և անկաշկանդ արտահայտվելու կարողությունների մշակման համար մենք կիրառում ենք բազմաթիվ առաջադրանքներ:

Օրինակ, «Հորինի՛ր մի պատմություն նկարի շուրջ»: «Պատմի՛ր, թե ինչ ես տեսնում նկարում» բնագրին կից նկարազարդման բովանդակության պատմում և համեմատում բնագրի հետ (բոլոր բնագրերը նկարազարդված են), տարբեր սխալներով լի նկարներում սխալների որոշում՝ ճշտի ներկայացում, նախապատրաստական զրույցների ընթացքում առաջացած հարցերի շուրջ դատողությունների շարադրում, ստեղծված խնդրահարույց իրավիճակներից դուրս գալու ելքերի որոնում, հեքիաթի բեմականացում, հանելուկների հորինում և այլն: Ինչպես տեսնում ենք, ներկայացված ցանկից, երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացմանն ուղղված առաջադրանքների մի ամբողջ խումբ կա: Այդ առաջադրանքները քայլ առ քայլ «բացում» են երեխայի լեզուն, նա ավելի ու ավելի համարձակ

է դառնում իր մտքերն արտահայտելիս, կարողանում է դրանք ձևակերպել տրամաբանորեն, եզրակացություններ է անում, դառնում ինքնուրույն ու ինքնավստահ: Երեխաների խոսքի զարգացման համար դասագրքում նախատեսված են բազմաբնույթ միջոցներ: Բնագրի շուրջ տարվող աշխատանքները (կարդալ, պատմել, պատասխանել բնագրին կից հարցերին) խոսքի զարգացման համար հիանալի միջոցներ են: Մայրենիի դասագրքում կան նաև խոսքի, ստեղծագործական կարողությունների զարգացմանը նպաստող այնպիսի առաջադրանքներ, որոնք տարվում են նկարների շուրջ: Օրինակ, «Այնպես նկարագրի՛ր հեքիաթի հերոսին , որ հասկանա» առաջադրանքները կատարելիս: Երեխան հայտնվում է խնդրահարույց իրավիճակում. պետք է որևէ մեկին բացատրի, թե ով է այս կամ այն հերոսը, ընդ որում՝ պետք է այնպես բացատրի, որ դիմացինը հասկանա, թե ում մասին է խոսքը: Խնդիրը բարդանում է նրանով, որ ենթադրվում է, թե դիմացինը ընդհանրապես ոչինչ չգիտի այդ հերոսի մասին: Այս խաղ–առաջադրանքը իրականացնելիս երեխան կարող է օգտագործել ոչ միայն բառային նկարագրությունը, այլև դիմախաղն ու շարժուձևը՝ յուրօրինակ կերպով միայնակ բեմականացնելով իր բացատրությունը: Երեխան, ըստ առարկայի հատկանիշների և գործառույթների, որքան հնարավոր է մանրամասնորեն բացատրում է արտաքին տեսքը, աշխատում է մտաբերել էական հատկանիշները, ձգտում է, որ իր խոսքը հասկանալի լինի դիմացինին, հնարավորինս շատ մանրամասներ է հիշում, երբ դիմացինը չի հասկանում: «Ուսումնարաններում ամեն բան սովորեցնելը ոչ կարելի է և ոչ էլ հնարավոր,— ասում էր Ս. Մանդինյանը,— մի բան պետք է թողնել մանուկին, որ նա առանց ուրիշի օգնությանը դիմելու անձամբ ձեռք բերի»: Այս առումով արտադասարանային աշխատանքները հատուկ արժեք են ստանում, որպես ինքնուրույն կերպով գիտելիքների ձեռբերման և հատկապես խոսքի մշակման ու կատարելագործման միջոց: Այդ իսկ պատճառով հեքիաթի արտադասարանային ընթերցանությունն անցկացնում էինք աշակերտների հետ միասին ձևավորված հեքիաթի անկյունում՝ կարևորելով իրադրության գեղագիտական բնույթը, որի մեջ երեխաները պետք է ունկնդրեին հեքիաթը: Յուրաքանչյուր նկար, յուրաքանչյուր իրազննական կերպար սրում էր գեղարվեստական խոսքի նկատմամբ երեխայի ընկալունակությունը, ավելի խորն էր բացահայտում հեքիաթի գաղափարը: Սենյակի նույնիսկ լուսավորությունը մեծ դեր էր խաղում: Երեխաներին հեքիաթի անկյուն ենք տանում ոչ հաճախ՝ շաբաթական մեկ անգամ: Հեքիաթները մատչելի են բոլորի համար: Ակնհայտորեն երևում է նաև այն, որ հեքիաթների միջոցով կարելի է կազմակերպել կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեությունը, հեքիաթների միջոցով սովորեցնել այն, ինչը չի ստացվում ավանդական միջոցներով, քանի որ

հեքիաթը, այն ինչ պետք է սովորեցնել, սովորեցնում է այնպես, որ երեխան չի զգում՝ ինչպես ինքը յուրացրեց անհրաժեշտ ինֆորմացիան: Հեքիաթի շուրջ աշխատանքներում մենք կարևորում ենք հերոսների այն արարքները, որոնց շուրջ զարգանում են հեքիաթի դեպքերը: Դրանց միջոցով են որոշվում գլխավոր հերոսի արարքի դրդապատճառները, հեքիաթի տրամաբանությունն ու գլխավոր միտքը: Այսպիսի վերլուծության արդյունք պետք է դառնան հեղինակի դիրքորոշման ըմբռնումն ու ընթերցողի վերաբերմունքի ձևավորումը ընթերցածի բովանդակության նկատմամբ: Հիմք ընդունելով բովանդակային բաղադրիչները՝ երեխայի ուշադրությունը մենք հրավիրում ենք որոշակի բառերի և արտահայտությունների վրա, քանի որ բառերի միջոցով է առաջին հերթին հնարավոր որոշել հերոսի հոգեվիճակը, նրա արարքների դրդապատճառները, հերոսի ինչպիսի լինելը, հեղինակի վերաբերմունքը նրա նկատմամբ և այլն: «Շնիկը» հեքիաթը (Ֆրանսերենից փոխադրեց Հռիփսիմե Բշտիկյանը)[1]: Այս հեքիաթի սկզբում կարելի է տալ հանելուկներ, որ երեխաները գուշակեն, թե ինչի մասին է խոսքը:

---

[1]Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, Եր., «Էդիտ Պրինտ», 2010 թ., էջ 32:

Հանելուկ՝

Շատ նման է նա գայլի,
Բայց գայլի հետ
չի քայլի,
Հավատարիմ ու բարի
Բարեկամն է մեր բարի:

«Շնիկը» հեքիաթը ընթերցելիս կարելի է հարց առաջադրել. «Շնիկը արևայի՞ն ակնոց էր գտել, թե՞ օպտիկական»: Ապա պետք է կարևորել հերոսների արարքների նկատմամբ աշակերտների զգացմունքային վերաբերմունքը: Օրինակ «Շնիկը» հեքիաթն ընթերցելիս կարելի է տալ այսպիսի հարց. Մարդիկ ինչո՞ւ սկսեցին ժպտալ շնիկի հետ: Ինչո՞ւ շնիկը չէր ուզում վերադարձնել ակնոցը տիրոջը:

Աշակերտներին օգնելու համար կարելի է տալ պատասխանների խումբ՝ թողնելով, որ նրանք ընտրեն իրենց համար ընդունելի պատասխանը. ա) Որովհետև ակնոցը փոխել էր նրա կյանքը, բ) Ակնոցը շատ թանկարժեք էր, գ) Չէր գտել ակնոցի իրական տիրոջը, և հիմնավորեն իրենց ընտրությունը:

Այստեղ պետք է կարևորել ընկերության վեհ գաղափարը և աշակերտների մեջ

սերմանել ընկերասիրություն: Կարելի է նաև այսպիսի հարցադրում անել. «Մինչև ակնոց գտնե՞լն էր իրեն երջանիկ համարում շնիկը, թե՞ ակնոցը գտնելուց հետո»: Արդյոք շնիկը հասկացա՞վ, թե ինչ էր երջանկությունը, կարողացա՞վ վայելել նրա քաղցր պտուղները: Այստեղ պետք է կարևորել պատկերացումները երջանկության վերաբերյալ:

Մեր փորձաքննության արդյունքները ամփոփելով՝ համոզվեցինք, որ հեքիաթի ուսումնասիրումը բազմաբնույթ եղանակներով ու մեթոդական հնարներով զարգացնում է կրտսեր դպրոցականների երևակայությունը, կապակցված խոսքը և ստեղծագործական կարողությունները: Եթե ուսումնական տարվա սկզբում քիչ թվով աշակերտներ էին կարողանում ինքնուրույն մտքեր ձևավորել կամ հեքիաթը ստեղծագործաբար պատմել՝ փոխելով հեքիաթի ավարտը, բարի դարձնելով չար հերոսներին և այլն, ապա ամիսներ անց պատկերը բոլորովին այլ էր. համարյա բոլորն էին մասնակցում, միայն թե ակտիվության տարբեր մակարդակներով: Ստորև ներկայացնում ենք արդյունքները, թե աշակերտների որ մասը ինչպիսի ակտիվություն էր դրսևորում:

Երկու աշակերտ կարողանում է հեքիաթի բովանդակությունը հստակ պատմել, բնութագրել հերոսներին և ստեղծագործել նոր գործողություններով հեքիաթ, խորհուրդ տալ հեքիաթների հերոսներին, համեմատել տարբեր հեքիաթների հերոսների, ինքնուրույն դատողություններ անել: Ութ աշակերտներ կարողանում են պատմել հեքիաթի բովանդակությունը, բնութագրել հերոսներին, հեքիաթի շարունակություն հորինել ՝ փոխելով ավարտը: 13 աշակերտներ պատմում են հեքիաթի բովանդակությունը, փոխում են հեքիաթի ավարտը ուսուցչի կամ ընկերների միջամտությամբ, ուղղված հարցերի օգնությամբ: 2 աշակերտներ դժվարանում են ինքնուրույն պատմել, պատասխանում են հարցերին, ցանկություն են հայտնում չար հերոսներին տեսնել բարի դարձած:

Չափազանց արդյունավետ է՝ երեխային առաջարկել սիրված հեքիաթի որևէ դրվագ պատկերել նկարի միջոցով (երեխաները շատ են սիրում նման հանձնարարություններ, և այն կարելի է կիրառել նկարչության դասին): Հեքիաթի որևէ ուշագրավ պահի նկարագրումը կամ հերոսներից մեկի բնութագրումը նշանակում է երևակայությամբ վերապրել հեքիաթի բովանդակությունը[1]: Այստեղ պարզ է, որ խոսքի ու գույների արվեստի միաձուլում է տեղի ունենում: Սա էլ ուսուցման արդյունավետությունը բարձրացնող կարևոր հանգամանքներից է:

Ուսուցիչը խոսում է հեքիաթի մասին, այնուհետև աշակերտներին հայտնի հեքիաթներից ներկայացվում են մի քանի երկխոսություններ: Երեխաները փորձում են ըստ

երկխոսությունների կազմել հաղորդակցությունների սխեմաներ և քարտեզներ: 2. Երեխաներին տրվում են հեքիաթի յուրաքանչյուր դրվագին համապատասխանող առանձին նախադասություններ, որոնք պետք է դասավորել

[1]Մնացականյան Եվա, Գրականագիտական ուղեցույց բառարան, Եր., «ՎՄՎ–Պրինտ», 2013 թ., էջ 439:

ճիշտ և տրամաբանված հերթականությամբ: 3. Առաջարկվում է կառուցել հեքիաթի կառուցվածքի բուրգ՝ հետևյալ ձևով.

• հեքիաթի հեղինակը
• գործող անձի անուն
• որտեղ է նա
• առաջին դրվագը
• երկրորդ դրվագը
• երրորդ դրվագը
• վերջաբան

ԳԼՈՒԽ 2

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԻՋՈՑ

Ընդունելով հեքիաթների դաստիարակչական մեծ նշանակությունը և ելնելով

գեղարվեստական կերպարներն ընկալելու առանձնահատկություններից՝ կարծում ենք, որ տարրական դպրոցի սովորողի վրա հեքիաթների դրական ներգործությունը կարելի է իրականացնել հետևյալ հիմնական պայմանի առկայության դեպքում. նախ և առաջ կարևորել, թե ո՞ւմ է հասցեագրված հեքիաթը: Անթաքույց է, որ Հովհ. Թումանյանի հեքիաթներով մեծացել և դաստիարակվել են բազմաթիվ սերունդներ: Դրանք վերաբերում են թե՛ տարրական դպրոցի սովորողներին և թե՛ ավագ դպրոցականներին: Սակայն այս բաժանումները խիստ պայմանական են, որովհետև ինչպես իրավացիորեն նկատում է Լ. Հախվերդյանը. «Այս հեքիաթներն այնպես են միահյուսված նույն արվեստով ու աշխարհազգացմամբ, հասարակական ու բարոյական չափանիշերով, որ անհնար է սահմանել՝ որտեղ է սկսվում մանկականը, որտեղ՝ մեծականը»[1] : Փոքրահասակ մանուկներին նա ծանոթացնում է շրջապատող աշխարհին, մանկանը նա տալիս է չարի ու բարու առաջին պատկերացումները, ծաղրվում ու խարազանվում է մարդկային հիմարությունն ու բթամտությունը («Անխելք մարդ», «Կիկոսի մահ»), փառաբանվում է հողի աշխատավորի ազնվությունն ու արդար վաստակը («Ոսկու կարասը», «Ոսկի քաղաքը»): Հեքիաթագիր Թումանյանը, այսպիսով, ուղեկցում է սովորողին՝ սկսած նրա մանկական տարիքից: Ինչպես բոլոր հեքիաթներում, Թումանյանի հեքիաթներում ևս պայքարը լուծվում է բարու, ազնիվի, գեղեցիկի հաղթանակով: Նմանօրինակ հեքիաթները երեխաներին ծանոթացնում են կյանքի լուսավոր ու ստվերոտ կողմերին, միաժամանակ դաստիարակում ազնվություն, սեր, գութ, կարեկցանք դեպի թույլերն ու իրենց նմանները: Թումանյանի հեքիաթների հերոսները, որոնց կողմն է հեղինակի համակրանքը, արդար, ազնիվ ու բարի մարդիկ են, որոնք զրպարտվում ու դատապարտվում են չար ու նախանձ պալատականների, հրեշների

[1] Լ. Հախվերդյան, Թումանյանի աշխարհը, Եր., 1966, էջ 359,

ու կախարդների կողմից: Մեծ նշանակություն տալով վարքի դրական նորմաների գործնական յուրացմանը, ինչպես նաև ելնելով սեփական կենսափորձից՝ կարծում եմ, որ անհրաժեշտ է սովորողի կյանքը կազմակերպել, նրանց գործունեության համար ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կօգնեն նրանց իրենց իսկ գործելաձևով հետևելու գրական հերոսների բարոյական դրական օրինակների: Այնուհետև շատ կարևոր է հետամուտ լինել այն բանին, թե երեխաների՝ հեքիաթներից ընկալած բարոյախոսությունն ինչպես է արտահայտվում նրանց ամենօրյա գործունեության մեջ: Այսպիսով՝ ուսուցչի առջև խնդիր է ծառանում փորձել հեքիաթների միջոցով ձգտել ընթերցողների մեջ զարգացնել սեր ու

բարություն, քաջություն և հաստատակամություն, լավատեսություն և կենսախնդություն: Թումանյանի հեքիաթների ուսուցումը տարրական դպրոցում հնարավորություն է տալիս սովորողի մեջ ձևավորելու լավատեսություն, կարևորելու արդար աշխատանքով վաստակած մի պատառ հացը, քան արքաների փողն ու կարողությունը: «Անհաղթ աքլոր»–ը հեքիաթի ուսուցմամբ սովորողին կարողանում ենք ուսուցանել, թե ինչպես սրամիտ աքլորը բարեհաջող ազատվում է իր դեմ նյութված դավերից ու որոգայթներից, հաղթում ագահ ու խորամանկ թագավորին, որն ուզում է խլել նրա գտած կոպեկը: Խիզախ ու անընկճելի աքլորի հնարամտություններով հիացած մանուկը համոզվում է, որ ագահությունը պարսավանքի արժանի մարդկային արատ է, որ այն մարդուն դնում է ծիծաղելի վիճակի մեջ և ի վերջո պատժվում է: Թումանյանի լավատեսության ամենից ցայտուն արտահայտությունը Արևելքում լայնորեն տարածված մի զրույցի հիման վրա գրված նրա «Քեֆ անողին քեֆ չի պակասի» հեքիաթն է: Հեղինակի գաղափարների կրողն աղքատ Հասանն է, որն ամենածանր պարագաներում անգամ չի կորցնում հոգու արիությունը, վճիտ հայացքով է նայում աշխարհին և ձգտում է ըստ կարելվույն «ուրախ անցնել, խաղաղ անցնել երկու օրվա էս ճամփեն»: Արդար աշխատանքով վաստակած մի պատառ հացով ու մի գավ գինով նա ավելի երջանիկ է, քան արքաները, որովհետև ունի քչով բավարարվելու հազվագյուտ հատկություն: Սրանք շատ կարևոր են անհատի ձևավորման, բարոյական դաստիարակության համար և այստեղ ակնհայտ է դառնում, որ երեխայի բարոյական դաստիարակության ամենաազդեցիկ միջոցներից մեկը հեքիաթն է: Տեղին է հիշել Վ. Գ. Բելինսկու խոսքերը, որ մանկական գրքերը ստեղծվում են դաստիարակության նպատակով, իսկ դաստիարակությունը մեծ գործ է. այն որոշում է մարդու ճակատագիրը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հովի. Թումանյանի հեքիաթներում գեղարվեստական կերպարի ուժով ներգործելով տարրական դպրոցում սովորողի զգացմունքների և բանականության վրա, հեղինակը հնարավորություն է ընձեռում դաստիարակելու բարություն, հոգևոր զգայունություն, հարգանք, սեր, լավատեսություն:
- Հեքիաթներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում սովորողների խոսքի և երևակայության, ինչպես նաև նրանց անձի արժեհամակարգի զարգացման վրա:
- Երեխաներին անչափ դուր են գալիս հեքիաթը ստեղծագործելով , փոփոխելով պատմելը
- Հեքիաթի վերլուծությունը նպաստում է, որ աշակերտները ըմբռնեն հեղինակի դիրքորոշումն ու ձևավորեն սեփական վերաբերմունքը ընթերցված նյութի բովանդակության նկատմամբ:
- Կարդացած հեքիաթները վերարտադրելիս պետք է հասնել նրան, որ երեխաները հարազատ մնան նրա լեզվին ու ոճին, հաճախ պատմեն հենց այն բարբառով, որով շարադրված է հեքիաթը, գործածեն հերոսների խոսքերը, արտահայտությունները, ժողովրդի բառն ու բանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., Մայրենի 4, Եր., «Էդիտ Պրինտ», 2010 թ.,

Մնացականյան Եվա, Գրականագիտական ուղեցույց բառարան, Եր., «ՎՄՎ–Պրինտ», 2013 թ.,

Հախվերդյան Լ., Թումանյանի աշխարհը, Եր., 1966,